ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ Արգամ Արամյանի՝ 2024թ. հունիսի 24-ից 26-ը ներառյալ ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Արգամ Արամյան, ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ք. Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն, 2024 թվականի հունիսի 24-ից 26-ը

3. Հրավիրող կողմը՝

ՕՊԵԿ Միջազգային զարգացման հիմնադրամ (Հիմնադրամ)

4. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն ՕՊԵԿ Միջազգային զարգացման հիմնադրամի կողմից կազմակերպված «Կայունության և հավասարության բարձրացում» խորագրով երրորդ ֆորումին:

5. Քննարկված թեմաները՝

Ֆորումին ներկա էին կառավարության և պետական մարմինների ներկայացուցիչներ, միջազգային զարգացման հանրության փորձառու մասնագետներ՝ քննարկելու ընթացիկ մարտահրավերներն ու հնարավորությունները փոխակերպող և կայուն զարգացման հասնելու համար:

ՕՊԵԿ Միջազգային զարգացման հիմնադրամի կողմից կազմակերպված «Կայունության և հավասարության բարձրացում» խորագրով երրորդ ֆորումը նվիրված էր 3 հիմնական գլոբալ հիմնախնդիրների՝

1. Ինստիտուտների ամրապնդում,
2. Ենթակառուցվածքային ծրագրերի համար նորարարությունների կիրառում,
3. Մարդկային կապիտալի զարգացում:

Ֆորումի շրջանակներում առանձին երկկողմ հանդիպում է տեղի ունեցել նաև ՕՊԵԿ Հիմնադրամի փոխնախագահ Շայմա Ալ-Շեյբիի հետ, որի ընթացքում քննարկվել են Հայաստանի

հետ առկա համագործակցությանը, հեռանկարային նոր ծրագրերին ու փոխգործակցության ակտիվացմանն ուղղված հարցեր:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ֆորումի առաջին նիստը նվիրված էր ինստիտուտների զարգացմանը: Ակտիվ երկխոսություն է ծավալվել կայուն, հուսալի ինստիտուցիոնալ համակարգեր ունենալու համար անհրաժեշտ քայլերի շուրջ: Առանձնացվել են ինստիտուցիոնալ զարգացման համար անհրաժեշտ չափով ֆինանսավորման ու մարդկային կարողությունների զարգացման բացերը, կարևորվել թափանցիկության, հաշվետվողականության ու արդյունավետության բարձրացմանն ուղղված թիրախային բարեփոխումները:

Երկրորդ նիստի ընթացքում քննարկման հիմնական թեման եղել է խելացի և կայուն ենթակառուցվածքների զարգացումը՝ նոր հնարավորությունների, վերափոխման, Կայուն զարգացման նպատակների, կայուն աճի ու բարգավաճման համատեքստում: Նշվել է, մասնավորապես, որ արդի ժամանակներում ենթակառուցվածքային ծրագրերի ավանդական ֆինանսավորման ուղիներն այլևս չեն արդարացնում, և անհրաժեշտ են ծրագրերի իրականացման նոր՝ թիրախային մարտավարություններ ու ռազմավարություններ: Այս առումով շեշտադրվել է նոր տեխնոլոգիաների դերը:

Ֆորումի վերջին՝ երրորդ նիստն ամբողջությամբ նվիրված էր մարդկային ներուժի բացահայտմանն ու մարդկային կապիտալի զարգացմանը՝ որպես ներկա ժամանակների հրամայական ու ռազմավարական անհրաժեշտություն: Ակտիվ քննարկումներ են ծավալվել մարդկային կապիտալի զարգացմանը խոչընդոտող տեխնոլոգիաների պակասի, սոցիալական, տնտեսական, քաղաքական ու բնապահպանական անկայունության հաղթահարման ուղիների շուրջ:

Ֆորումի շրջանակներում ՀՀ ՖՆ պատվիրակությունն առանձին երկկողմ հանդիպում է ունեցել նաև ՕՊԵԿ Հիմնադրամի փոխնախագահ Շայմա Ալ-Շեյբիի հետ: Հանդիպման ընթացքում մտքեր ենք փոխանակել առկա համագործակցության ու վերջինիս ակտիվացման հնարավորությունների շուրջ:

Մասնավորապես, բյուջետային աջակցության ծրագրերի շուրջ համագործակցության մասով, չնայած այն հանգամանքին, որ նախկին հանդիպումների ընթացքում ՕՊԵԿ Հիմնադրամից տեղեկացրել էին, որ Հիմնադրամից Հայաստանը կարող է բյուջետային աջակցության վարկային միջոցներ ներգրավել միայն 2025թ., ներկայումս ՕՊԵԿ Հիմնադրամի փոխնախագահը տեղեկացրել է, որ բյուջետային աջակցության միջոցներ Հայաստանին կարող են տրամադրվել նաև 2024թ.՝ մինչև 50 մլն եվրո գումարի չափով, և մինչև 100 մլն եվրո՝ 2025թ.:

Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև ՕՊԵԿ Հիմնադրամի կողմից «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագրի Տրանշ 4՝ Սիսիան-Քաջարան նոր ճանապարհի, ինչպես նաև Քաջարանի թունելի կառուցման ծրագրի համաֆինանսավորման հնարավորությունը: Միաժամանակ ՀՀ ՖՆ պետական պարտքի կառավարման վարչությունը զուգահեռ աշխատանքներ է տանում ՕՊԵԿ Հիմնադրամի գործընկերների հետ՝ ֆինանսավորման պայմանների հստակեցման ու փոխհամաձայնեցման շուրջ:

ՕՊԵԿ Հիմնադրամի փոխնախագահը տեղեկացրել է նաև Հայաստանի հետ ռազմավարական փաստաթուղթ ունենալու Հիմնադրամի մտադրության մասին: ՀՀ ՖՆ պատվիրակության կողմից, հիմք ընդունելով օտարերկրյա պետությունների ու միջազգային կառույցների հետ առկա հաջողված փորձը, առաջարկել է դիտարկել համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի ստորագրումը, և այդ առաջարկը ողջունվել է Հիմանդրամի փոխնախագահի կողմից:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ՕՊԵԿ Հիմնադրամի փոխնախագահ Շայմա Ալ-Շեյբիի հետ երկկողմ հանդիպման ընթացքում համաձայնություն է ձեռք բերվել՝

- Քաջարանի թունելի կառուցման ծրագրի մասով ակտիվացնել համատեղ աշխատանքները տեխնիկատնտեսական ուսումնասիրության պատրաստ լինելուն պես,

- համատեղ աշխատել Հիմնադրամի և Հայաստանի միջև փոխըմբռնման հուշագրի նախագծի շուրջ

- Շարունակել երկխոսությունը 2024թ. և 2025թ. ՕՊԵԿ հիմնադրամից բյուջետային աջակցության միջոցների ներգրավման շուրջ:

Միաժամանակ, Ֆորումի շրջանակներում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

Ստորագրությունը, ամսաթիվը՝

01 հուլիսի 2024թ.